



ՍՈՒՋՈՒՄՆԵՐԻ ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱԿԱՆ ԳԻՏԱՐՇԱՎ

« ՍԵՎԱՆԱ ԼԻՃ »

- ԳԻՏԱՐՇԱՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ -
- ՀՈՒՆԻՍ 2010 -





Ց Ա Ն Կ

Նախաբան.....	5
Շնորհակալանքներ.....	6
Ծրագրի նկարագիր	8
<i>ՍԽԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՁՐՅԱ ԱՎԱԶԱՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>	
Նախապատրաստական արշավ, ապրիլ 2010.....	16
<i>2010թ ԱՊՐԻԼԻ 10-ԻՑ 19-Ը ՍԽԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՁՐՅԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ</i>	
2010թ գիտարշավի նպատակները.....	21
<i>2010թ ՀՈՒՆԻՄԻ 12-ԻՑ ՀՈՒԼԻՄԻ 2-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍԽԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՁՐՅԱ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ</i>	
Գիտարշավի իրականացման պայմանները	24
<i>Մանրամասն հաշվետվություն</i>	
Բյուջե	31
Ֆինանսական հաշվետվություն	32
Հավելվածներ	34
<i>Հավելված I : 2010թ գիտարշավի նախաձեռնության վերաբերյալ գրություններ</i>	
<i>Հավելված II : 2010թ գիտարշավի մասնակցության և իրականացման պայմաններ</i>	
<i>Հավելված III : Գիտական հաշվետվություններ</i>	
<i>Հավելված IV : Լուսաբանում</i>	
<i>Հավելված V : Ստորգետնյա հետազոտությունների և սուզումների կենտրոն/ ՍՀՄԿ</i>	
<i>Հավելված VI : 2011թ գիտարշավի նկարագրություն</i>	





Նախաբան

Այս հաշվետվության նպատակն է ի սկզբանե ներկայացնել մի ծրագիր, որը հանդիսանում է ստորգետնյա հետազոտությունների բնագավառում մասնագիտացած փորձառու սուզորդ Կլոդ Թուլումջյանի մտահղացումը: Ստորգետնյա հետազոտությունների և սուզումների կենտրոնը, (ՄՀՄԿ) Կլոդ Թուլումջյանի նախագահությամբ տարիներ շարունակ իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերում ողջ Արևելյան Եվրոպայում իրականացվող ջրասուզումների գործունեության մեջ:

Ներքոհիշյալ նկարագրվող ծրագիրը գիտական առումով եզակի է ստորջրյա հետազոտությունների բնագավառում և չի կենտրոնանում միայն Սևանա լճի վրա, այլ ընդգրկում է Հայաստանի մյուս լճերը ևս:

2010թ-ի հունիս ամսին իրականացված գիտարշավը հանդիսացավ փորձնական և պիլոտային առաքելություն, մի կողմից գիտնականների, մյուս կողմից՝ ժամանցային գործունեություն ծավալողների համար և նպատակն էր ուսումնասիրել ծրագրի իրականացման հավանականությունը, ձեռքբերված արդյունքների հանդեպ հետաքրքրությունը և հետագա զարգացման հեռանկարները:

Այսպիսով, հաշվետվությունը ներկայացնում է 2010թ-ին տարված նախապատրաստական աշխատանքների փուլը, երբ ծրագրի նախաձեռնող Կլոդ Թուլումջյանն ու նրա օգնական Ստեֆան Կոչայանը բազմաթիվ հարցազրույցներ ունեցան Երևանում և հաստատեցին նախնական անհրաժեշտ կապեր՝ տեղում առաջին գիտարշավը սկսելու համար:

Երրորդ հատվածում ներկայացվում է ծրագրի իրականացումը տասնօրյա ժամկետում՝ 2010թ-ի հունիսի 12-ից հուլիսի 2-ը ընկած ժամանակահատվածում: Գիտարշավի իրականացման, ինչպես նաև ռեսուրսների մոբիլիզացման ճանապարհին հանդիպած դժվարություններից բացի, ներկայացվում է նաև ձեռք բերված արդյունքները և այն մեծ հետաքրքրությունը, որ նկատվեց գիտնականների շրջանակներում նմանօրինակ գործունեության նկատմամբ, քանի որ հետազոտությունների արդյունքում ստացված բացառիկ տարրերը, նմուշները, լուսանկարներն ու տեսանյութերը խթանում են մի շարք բնագավառների գիտահետազոտական աշխատանքներ:

Վերջին մասը վերաբերում է այս առաջին գիտարշավի լուսաբանմանը: Բազմաթիվ լրատվամիջոցներ՝ մամուլ, հեռուստատեսություն, համացանց, ռադիո՝ ինչպես հայկական, այնպես էլ ֆրանսիական, լայնորեն արձագանքեցին այս թեմային և այն ներկայացվեց հանրությանը:

Ի վերջո, այս փաստաթուղթը հաղորդակցման և աջակցության միջոց է, որը կոչ է անում յուրաքանչյուր մարդու, կազմակերպության, վարչական կամ հասարակական մարմնի ներգրավվել այս գործունեությանը և հետաքրքրության եզրեր գտնելու



դեպքում երաշխավորել ծրագրի հետագա անհրաժեշտ զարգացումը համընդհանուր շահի համար :

Շնորհակալանքներ

Եթե այս առաջին գիտարշավը հաջողությամբ կայացավ, ապա դա կատարվեց, անկասկած, շնորհիվ կազմակերպիչների մեծ աջակցության առաջին իսկ պահից՝ երկուշաբթի, 22-ը հունիսի, ժամը 11:45, երբ իրականացվեց առաջին սուզումը Բերդկունքի հատվածում :

Առաջին հերթին, մեր երախտագիտությունն ենք հայտնում ինստիտուցիոնալ մեծ աջակցության համար, որ ցուցաբերեցին Ֆրանսիայում Հայաստանի, ինչպես նաև Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունները, մասնավորապես՝ վերջինիս Մշակույթի և համագործակցության բաժինը, որի դերը որոշիչ էր մեր առաքելության հաջողության համար : Խորապես երախտապարտ ենք ողջ անձնակազմին և Մշակույթի և համագործակցության գծով խորհրդական պարոն Ժան-Պոլ Մարտենին, որոնք իրենց մեծ ներդրումն ունեցան մեր գործում :

Շնորհակալ ենք նաև բոլոր այն ինստիտուցիոնալ պատասխանատուներին, որոնց հանդիպեցինք ապրիլ ամսին, իրենց ցուցաբերած մեծ հետաքրքրության և օգտակար խորհուրդների համար :

Շնորհակալ ենք Մարսելի Անդրծովյա հնաբանական հետզոտությունների կենտրոնի նախագահ պարոն Սերժ Խիմենեսից : Հուսալի գործընկեր, որը մեզ է փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ և տրամադրել է սուզումների համար նախատեսված կարևոր սարքավորումներ : Ինչպես նաև շնորհակալ ենք Ֆրանս-հայկական Առևտրի և արդյունաբերության տան փոխնախագահ պարոն Բերնար Հատեմյանից :

Մեր շնորհակալություններն ենք հղում բոլոր մեր ընկերներին՝ երիտասարդ և դինամիկ երևանցիներին, որոնք մեզ ուղեկցել են բոլոր փուլերում և պատեհ պահերի մեր առջև անհրաժեշտ դռները...

Սակայն հարկ է նշել, որ մեր այս արկածը արագ և արդյունավետ չէր իրականանա առանց թարգմանչական որոշիչ աջակցության :

Առաջին հերթին, շնորհակալություն ենք հայտնում գլխավոր թարգմանիչ Ժաննա Բույուկյան-Ջելոյանին, ով մեզ ուղեկցում է մեր նախաձեռնության առաջին իսկ քայլերից : Թարգմանչական գործում արդյունավետ կերպով մեզ աջակցում է Լիլի Թոմակյանը, շնորհիվ SPFA Երևան կազմակերպության հետ համագործակցության : Մեծ ներգրավվածություն ունի նաև Լուսինե Մեժլումյանը, որը գիտական համապատասխան ուղղումներ է կատարում է իր գործընկերների թարգմանություններում : Պետք է նշել նաև Հայաստանում ֆրանսիական համալսարանի ուսանողուհիներ Սյուզիին և Դիանային՝ 2010թ-ի ապրիլի նախապատրաստական ժողովների ընթացքում թարգմանչական գործունեության համար :



Մեր երախտագիտությունն ենք արտահայտում բոլոր այս մարդկանց, քանի որ նրանք մեր կողքին էին իրենց անշահախնդիր աշխատանքով, ինչը և մեր առաջին գիտարշավի հաջողության գրավականն էր :

Մեր շնորհակալությունն ենք հղում նաև.

- Գրիգոր Ալեքսանյանին՝ «Armenia Wine» ընկերության գործադիր տնօրենին, որը Հայաստան կատարած մեր երկու այցերի ժամանակ մեզ է տրամադրել իր Lada Niva մականիշի ավտոմեքենան,
- Արայիկ Նավոյանին՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանի փոխտեկտորին, որը մեզ աջակցել է ապրիլին կայացած ժողովների ժամանակ և օգնություն ցուցաբերել օդակայանային փոխադրումների հարցում,
- Մանե Մամյանին Վեոլիա Հայաստան-Երևան Ջուր ընկերության աշխատակցին՝ բազմաթիվ կոնտակտների և ծանոթությունների համար,
- Արթուր Պողոսյանին՝ ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկի Մարկետիգի բաժնի ղեկավարին, որն իր ակտիվ աջակցությունն է ցուցաբերել գիտարշավը սկսելու գործում,
- Հայաստանում ֆրանսիական համալսարանի տնօրինությանը՝ ուսանողների կրթական բարձր մակարդակի համար,
- Հաբեթնակ Հակոբյանին՝ SPFA-Հայաստան կազմակերպության տնօրենին՝ մեր գործունեությանը ակտիվ աջակցելու համար,
 - «Saberatour» և «Armavia» ընկերություններին՝ արտոնյալ սակագների համար,
 - «Meditch» ընկերությանը, որը մեզ է տրամադրել անվտանգությունն ապահովող հատուկ սարքավորումներ և ադապտերներ՝ տեղում գիտարշավն իրականացնելու համար,
 - «Տարեց սուզորդ»-ին՝ մշտապես օգտակար խորհուրդների և սարքավորումների շնայլ աջակցությամբ :


Ինչպես նաև լրատվամիջոցներին. Մայտե Ժադդեն՝ France-Arménie ամսագրի թղթակից, Գրիգոր Ամիրզանյան՝ Nouvelles d'Arménie Magazine ամսագրի լրագրող, հայկական հանրային հեռուստաընկերությանը՝ Հ1-ին և «Միր TV» -ին:

ՄՏՈՐՁՐՅԱ ՍՈՒՋՄԱՆ ԳԻՏԱՐՇԱՎ «ՄԵՎԱՆԱ ԼԻՃ»

Սևանա լիճը, Հայաստանյան մոզական մի վայր իր լույսի, լռության, մեծության և պատմության տեսանկյունից, շարունակում է մնալ խորհրդավոր չնայած տարատեսակ ինստիտուտների կողմից իրականացված բազմաթիվ ուսումնասիրությունների: Եթե նրա շրջակա միջավայրը հարևան բնակիչների կողմից օգտագործվել է գյուղատնտեսության, ձկնորսության, որսորդության և տուրիզմի նպատակներով, ապա ստորջրյա համատեքստում լիճը մարդու համար մնում է գեթե անծանոթ: Անկասկած, այն վերջին տարածքն է Հայաստանում, որը դեռևս ենթակա է բացահայտման և ուսումնասիրության :

«ՄԵՎԱՆԱ ԼԻՃ»

Քաղցրահամ ջուր ունեցող այս լիճը գտնվում է Հայաստանում և ունի 1250կմ² մակերես, ինչը կազմում է Հյաստանի տարածքի 5%-ը: Այն երկու անգամ ավելի մեծ է քան Ժնևի լիճը, և շրջապատված է 2500-ից 3000 մետր բարձրություն ունեցող սարերով: Սևանա լճի երկարությունը կազմում է 75 կմ, մաքսիմալ լայնությունը՝ 57 կմ, նրա բարձրությունը ծովի մակարդակից՝ 1916 մետր, իսկ նրա խորությունը՝ 85 մ: Վերջին 50 տարիների ընթացքում Սևանա լճի մակարդակը կտրուկ նվազել է, որի պատճառն է հանդիսանում նրա ջրերի օգտագործումը հողերի ոռոգման և հիդրոէլեկտրակայանների մատակարարման համար : Այս պաճառով ձեռնարկվեցին նոր միջոցառումներ, մասնավորապես, նոր ջրանցքի կառուցումը, որի միջոցով լիճը սնուցվում է Արփա գետի ջրերով, ինչպես նաև վերջի տարիների առատ անձրևները **NATIONAL PARK "SEVAN"** նպաստում են լճի մակարդակի բարձրացմանը:



Source: Ministry of Nature Protection of Armenia, 1998

Map prepared by Environmental Research and Management Center, American University of Armenia

Ջրային միջավայրի աղտոտումը և էուտրոֆիզացիան հանգեցնում են կենսաբանական որակի խնդիրների, որոնք անդրադառնում են լճի կենսաբազմազանության վրա: Մոտ անցյալում Սևանա լիճը պարունակում էր բացառիկ ձկնատեսակներ, որոնցից մեկը կոչվում է “Բշխան”, որն էլ շատ ճանաչված է իր յուրօրինակ համով: Այս ձկան որսը ավամերձ բազմաթիվ բնակիչների կյանքի ապրուստ էր հանդիսանում, սակայն վերջինիս քանակության կտրուկ նվազումը, ինչի պատճառն է ջրերի աղտոտումը, հանգեցրել է ձկնորսության խիստ կանոնակարգմանը:

Ձկան տարատեսակներից մեկը, որը կարող ենք հանդիպել լճում (Լուսանկար Ս. Կոջայանի)



Լճի պղտոր ջրում մարդկային աղտոտման ամենատեսանելի հետևանքները (Լուսանկար Կ. Թուլումջյանի)

Այնուամենայնիվ, կենսաբազմազանության փոփոխման հիմնական պատճառները ակնհայտ չեն՝ հիմք ընդունելով հետազոտությունների, լուսանկարչական փաստաթղթերի և ստորջրյա տեսաժապավենների բացակայությունը: Բացի այդ, անհրաժեշտ է թվում իրականացնել ստորջրյա սուզարշավ լճի ֆլորան, ֆաունան և հատակը ուսումնասիրելու նպատակով, ինչը հնարավորություն կտա ավելի լավ ճանաչել լիճը:



ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿ

Հայաստանում ստորջրյա սուզումը տարբեր պատճառներով զարգացած չէ: Պատճառներից հիմնականը մթնոլորտային պայմաններն են, ինչի արդյունքում այս շրջանը լողալու և տուրիստական նպատակներով տարվա կտրվածքով հարմար է միայն 4-5 ամիսների ընթացքում: Լճի ջերմաստիճանը հաճախ պատճառ է դառնում ջրախեղդության, ինչը հանգեցնում է վախի և ֆոբիաների առաջացմանը: Ջերմաստիճանը ամռանը լճի խորքում կազմում է 3-9°C: Սա նույնպես խոչընդոտ է հանդիսանում ստորջրյա սուզումների համար:

Ներկայումս պետության տնտեսական իրավիճակը լրացուցիչ արգելք է հանդիսանում ջրասուզման զարգացմանը, քանի որ այն պահանջում է թանկարժեք սարքավորումներ և համապատասխան գիտելիքներ, որոնք համախմբում են սպորտը, ֆիզիոլոգիան, պատրաստվածությունը, նյութական ապահովվածությունը և շրջակա միջավայրը: Նշված հանգամանքները էլ ավելի են խոչընդոտում հետազոտական ջրասուզման զարգացմանը և այդ ոլորտում հետազոտությունների իրականացմանը:

Միաժամանակ, հարկ է նշել սուզորդների փոքր, բայց ակտիվ խմբի առկայության մասին, որի հնարավորությունները սակայն սահմանափակված են անհրաժեշտ սարքավորումների, կոմպրեսորների (օդամուղ սարքերի), նավակների բացակայության և ջրի ցածր ճերմաստիճանի պատճառով:

Վերջին շրջանում Սևանա լճի շուրջ կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն բացակայում են ստորջրյա հետազոտությունների վերաբերյալ զեկույցներ և հաշվետվություններ: Այս բնագավառի վերաբերյալ տվյալները, եթե այդպիսիք կան, թերևս պետք է փնտրվեն խորհրդային արխիվներում: Իրավիճակը նույնն է լուսանկարչական փաստաթղթերի և տեսանյութերի վերաբերյալ:

Սևանա լճի ստորև ներկայացված ստորջրյա բացառիկ լուսանկարները հիմնականում կատարվել են ֆրանսիացի սուզորդ՝ Ստեֆան Կոչայանի կողմից:

ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանում ջրասուզման գիտարշավի իրականացման միտքը ծնվել է 6-օրյա հետազոտական առաքելության արդյունքում, որն անձամբ իրանացրել է Կլոդ Թուլումջյանը:

Այս ճամփորդությունը հնարավորություն տվեց իրավիճակի մասին կազմել հակիրճ պատկերացում և ուսումնասիրել հայկական ստորջրյա բնագավառի վերաբերյալ գոյություն ունեցող սակավաթիվ գիտելիքները՝ մասնավորապես կապված Սևանա լճին հետ: Սուզորդների փոքր թիվը, (6-10 հոգի), նյութական միջոցների (2 օդի կոմպրեսորներ, մոտ 10 բալոններ, որոնք մեծամասամբ պատկանում են



փրկիչներին անհայտ կորածների որոնողական աշխատանքներն իրականացնելու համար) և հմտության բացակայությունը հանգեցրեցին նրան, որ լիճը շարունակում է մնալ չբացահայտված:

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ

Լճի ստորջրյա ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում գնահատելու հետագա գիտական հետազոտությունների ուղղությունները, որոնք առաջնահերթ ներառում են՝


Ֆաունայի և ֆլորայի ուսումնասիրություններ

Ֆաունայի և ֆլորայի մինչ օրս կատարված ուսումնասիրությունները, որոնք իրականացվել են նավակների օգնությամբ ստացված նմուշների հետազոտության արդյունքում, ենթակա են լրացվելու սուզման միջոցով կատարված անմիջական ուսումնասիրություններով, ինչպես նաև լուսանկարներով և տեսանյութերով:



(լուսանկարը՝ Ս. Կոջայանի)

Հսկայական խեցգետիններ (ավելի քան 15սմ երկարությամբ), որոնք ապաստանում են լճի հատակին



Տարօրինակ ստորջրյա բույսեր, որոնք հաճախ ունեն հրաշագեղ գույներ (լուսանկարը՝ Վահե Մելքոնյանի)





Հնագիտական հետազոտություններ

Սևան քաղաքի հարավ-արևելքում իրականացված բազմաթիվ պեղումները լրացրել են մ.թ.ա. 5-րդ դարին պատկանող փլատակների վերաբերյալ տեղեկությունները: Նրանք գտնվում են Սևանա լճի եզրին և ձգվում են մինչև նրա մակերեսի տակ: «Այաս» ակումբի անդամները ջրասուզման արդյունքում վերջերս բացահայտել են գերեզմանաքարերով ծածկված ցածր խորությամբ մի հատված, որը ենթակա է ուսումնասիրության և հետազոտության:

Պալեոնտոլոգիական հետազոտություններ

Սևանա լիճը պարունակում է բազմաթիվ հանքաշերտեր, որոնք ենթակա են բացահայտման և հետազոտության: Վահե Մելքոնյանը, որը անկասկած հանդիսանում է Հայաստանի լավագույն սուզորդը, վերջերս խնդրել է որևէ պալեոնտոլոգի փոխանցել 40սմ երկարություն և 20սմ լայնություն և գրեթե 2-ից 3կգ քաշ ունեցող մի կալցիֆիկացված ոսկոր:

Ջրակրարության վերաբերյալ ուսումնասիրություններ և դիտարկումներ

Սևանա լճի խորության վերաբերյալ տարակարծության պայմաններում, լճի հատակի ու դրա մրուրապատ ծածկույթների իմացությունը կարող է օգնել լուծելու հիդրոերկրաբանության հետ կապված որոշակի խնդիրներ: Միննույնը կարելի է ասել նաև լճի հատակի (անկասկած՝ ջերմային) աղբյուրների ջրի և ջրատակի ճեղքերից դուրս պրծնող գազերի նմուշների ձեռքբերման վերաբերյալ: Այս գործողությունները պետք է իրականացվեն Հայաստանի երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ սերտ համագործակցությամբ, որտեղ շատ հետաքրքրված են այս ծրագրով:



Խեցգետինները գտնում են իրենց ապաստանը մրուրների մեջ, որոնք հաճախ կարծրանում են և վերածվում են շերտերի (լուսանկարը՝ Ստեֆան Կոջայանի)



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Լուսանկարչական փաստաթղթերը և տեսանյութերը, որոնք ձեռք են բերվել նպատակակետային տարածքներում ջրասուզումների արդյունքում, կարող են նպաստել, որպեսզի տեղի բնակչությունը որոշակի զգոնություն ցուցաբերի էկոհամակարգի դյուրաբեկության հանդեպ: Դրանք կարող են փոխել նաև կազմակերպությունների գործելակերպը, որոնք երբեմն անկանոն շինարարություն են իրականացնում ավերի մոտակայքում :

Բացի այդ, այս տեղեկությունները որոշակի կողմնորոշում կտան «Սևան» ազգային պարկին, ով հնարավորություն կունենա չսահմանափակվել միայն վերգետնյա ֆաունայի ու ֆլորայի պահպանությամբ և ուսումնասիրությամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ջրասուզման տեխնոլոգիաների ուսուցանումը կարող է նպաստել համապատասխան վայրերում ջրասուզման դպրոցների կամ ակումբների բացմանը : Դա նոր շունչ կհաղորդի ջրային տուրիզմին, որը սկսել է զարգանալ լճի շրջակայքում :

ՄԻՋՈՑՆԵՐ

Հետազոտության այս առաջին փուլի իրականացման համար օգտագործվող միջոցներն են`

- սուզագետնով ջրասուզումներ,
- ստորջրյա լուսանկարների և տեսանյութերի ձեռք բերում,
- մոտորային նավակով որոնողական և տեղագրման աշխատանքներ

Առաջին փուլի ավարտին կկազմվի մանրամասն հաշվետվություն, կկատարվեն լուսանկարներ և կնկարահանվի տեսաֆիլմ: Այս ամենը որոնք կտրամադրվի հետաքրքրված հաստատություններին:

Միաժամանակ նախատեսվում է լուսաբանել այս գիտարշավը թերթերում, մասնագիտացված ամսագրերում, ինչպես նաև հայկական և ֆրանսիական հեռուստատեսություններով` շնորհիվ կատարվելիք նկարահանումների, Հայաստանի երկրաբանական գիտությունների ինստիտուտի և «Այաս» ակումբի հետ մեր ունեցած կապերի :



ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Գիտարշավը տեղի կունենա 2010թ. մայիսի 15-ից հուլիսի 15-ը ընկած ժամանակահատվածում և կտևի 21 օր:

ԿԱԶՄԸ

Խումբը կազմված կլինի 2 ֆրանսիացի և 4 հայ սուզորդներից, ինչպես նաև երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտնականներից: Այս խմբի հետ կհամագործակցեն նաև Արտակարգ իրավիճակների նախարարության որոշ սուզորդներ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

- Հայաստանի գիտությունների ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտ, որը ղեկավարվում է դոկտոր Արկադի Կարախանյանը,
- Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբուծության ինստիտուտ, որը ղեկավարվում է դոկտոր Բարդուխ Գաբրիելյանը,
- «Այաս» ծովային հետազոտությունների ակումբը, որը Հայաստանում և Եվրոպայում մեծ ճանաչում է ձեռք բերել հայկական միջնադարյան առագաստանավի կրկնօրինակը կառուցելու համար, որի միջոցով կատարվել են ճանապարհորդություն դեպի Վրաստան, Ֆրանսիա, Անգլիա և Ռուսաստան: Ակումբը նախագահում է Կարեն Բալայանը :
- Սամուել Շահինյան` Հայաստանի Քարանձավագիտության ֆեդերացիայի նախագահ
- Արտակ Սարգսյան` «Մեան ազգային պարկի» պաշտոնյա,
- Մարսելի ստորգետնյա սուզումների և հետազոտությունների կենտրոն,
- Մարսելի ստորջրյա հնագիտական հետազոտությունների ակումբ :

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՋՐԱՍՈՒԶՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիտարշավը միաժամանակ նպատակ է հետապնդում օժանդակելու

- Ֆինանսական տեսանկյունից.
 - փոքր սարքավորումների նվիրատվություն (լողաթաթեր, դիմակներ, խողովակներ),
 - սուզման արտահագուստների նվիրատվություն,
 - կոմպրեսորի նվիրատվություն բալոնները սեղմված օդով լցնելու համար,
 - արկղի և տեսախցիկի նվիրատվություն` ավելի շատ ստորջրյա պատկերներ ստանալու համար :



- Տեխնոլոգիական տեսանկյունից.
 - Ֆրանսիայում, ինչպես նաև Սորջոյա գործնությունների համաշխարհային ֆեդերացիայի անդամների կողմից կիրառվող ջրասուզման տեխնոլոգիայի ուսուցանում,
 - թթվածնի կիրառության խնդիրների վերհանում,

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այս ծրագրի հաջողությունն ապահովելու համար ներքոհիշյալ հաստատությունները տեղեկացված կլինեն գիտարշավի կազմակերպան վերաբերյալ : Ծրագրի տարբեր փուլերում մենք կարող ենք դիմել նրանցից մի քանիսի միջնորդությանը՝ տեղում մեզ օժանդակելու համար:

Վարչական մարմինների կազմը

- Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատուն,
- Ֆրանսիայում Հայաստանի դեսպանատուն,
- ՀՀ Սփյուռքի նախարարություն
- ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
- Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա
- Բնապահպանության նախարարություն
- Արտակարգ իրավիճակների նախարարություն

ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Սևանա լճում ջրասուզումների իրականացման համար վերապատրաստված և անհրաժեշտ սարքավորումներով զինված խումբը գիտական հետազոտությունների լայն հնարավորություն է ստեղծում Հայաստանում, որտեղ Սևանա լիճը շատ կարևոր տեղ է զբաղեցնում:

Հայտնի է, որ լճի հետազոտությունը պետք է բացահայտի անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կտան լուծելու բնապահպանության հետ կապված որոշակի խնդիրներ, մասնավորապես՝ երկրաբանության, սեյսմոլոգիայի և աղտոտման բնագավառում :

Գիտարշավը, որը մենք ցանկանում ենք իրականացնել կհանդիսանա մի շարք հետազոտությունների առաջին փուլը, որոնք կիրականացվեն այս, գրեթե կուսական և մարդուն անձանոթ տարածքում :





**Մնանա լճի ստորջրյա հետազոտությունների
նախապատրաստական աշխատանքների հաշվետու զեկույց
10-19-ը ապրիլի, 2010 թ.**

Ծրագրի երկու կրողները՝ նախաձեռնող Կլոդ Տուլումջյանը և օգնական Ստեֆան Կոչայանը, 2010 թվականի ապրիլի 10-ից 19-ը Հայաստանում իրականացրեցին ծրագրի նախապատրաստական առաքելություն՝ ծրագրի իրականացման հնարավորություններում համոզվելու նպատակով : Ծրագիրը մեծ հետաքրքրություն առաջացրեց տարբեր գործընկերների շրջանակներում :

Այդ առաքելության հիմնախնդիրներն էին.

- Հանդիպել Մնանա լճով զբաղվող համապատասխան հայկական կառույցներին՝ տեղեկանալու համար, թե որոնք են այդ կառույցներին հուզող խնդիրները և արդյոք նման ծրագիրը կարող է նրանց հետաքրքրել :
- Ձեռք բերել կոնկրետ տվյալներ ուսումնասիրվող շրջակայքի տարրերի բնույթի և աշխարհագրական ստույգ դիրքի վերաբերյալ (կոորդինատներ, խորություն ...):
- Ուսումնասիրել այդ կառույցների կամ վարչությունների միջոցները, նյութական աջակցությունը, որ նրանք կարող են ցուցաբերել, ինչպես նաև աջակցության պայմանները:
- Տեղական իշխանություններից ձեռք բերել իրավունք՝ ստորջրյա գիտահետազոտական աշխատանքների իրականացնելու համար՝ տեղական իշխանությունների և բնակչության հետ խնդիրներից խուսափելու նպատակով :
- Ձեռք բերել իրավունք՝ ներմուծելու ստորջրյա հետազոտությունների համար նախատեսված սարքավորումներ (սուզվելու և ստորջրյա ուսումնասիրության սարքավորումներ, օդամղիչ/կոմպրեսոր)՝ ազատվելով օդանավակայում մաքսագերծման հարկից: Սարքավորումների մի մասը կլինի օգտագործված, մյուսը մասը՝ նոր :
- Ուսումնասիրել ձեռք բերված արդյունքների հրապարակաման միջոցները ինչպես գիտնականների, այնպես էլ հասարակության առջև՝ տեղեկացնելով լճի բնապահպանման և ջրային սպորտաձևերի (լող, առագաստանավային սպորտ, նավարկություն) պրակտիկայում հնարավոր վտանգների պատասխանատվության մասին :
- Ուսումնասիրել ստորջրյա սուզումները Հայաստանում որպես սպորտաձև զարգացնելու հեռանկարները :
- Հանդիպել հայ հովանավորների, որոնք կարող են ֆինանսավորել ծրագրի 2010-2011 թվականի սկզբնական փուլը
- Հանդիպել համապատասխան պատասխանատու անձանց, որոնց հետ նախկինում հանդիպել ենք կամ հաղորդակցվել հեռահար կապով :
- Ձեռք բերել ծրագրի իրականացմանը նպաստող յուրաքանչյուր տեղեկատվություն :



Այդ առաքելության ընթացքում մենք հանդիպեցինք հետևյալ վարչություններին, կառույցներին, ընկերություններին և ձեռնարկություններին.

- Ժան-Պոլ Մարտեն, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի և համագործակցության գծով խորհրդական :
- Հրաչյա Ասլանյան, ՀՀ Սփյուռքի նախարարության՝ Եվրոպայի հայ համայնքների վարչության ղեկավար
- Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի գիտնականներ
 - Բարդուխ Գաբրիելյան, Հիդրոէկոլոգիայի և իխտոլոգիայի ինստիտուտի տնօրեն
 - Արկադի Կարախանյան, Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն
 - Արմեն Սաղաթելյան, Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն
 - Պավել Ավետիսյան, Էթնոլոգիայի և հնաբանության ինստիտուտի տնօրեն
- Սամվել Հարությունյան, ՀՀ Գիտության պետական կոմիտեի տնօրեն
- Վիկտոր Մարտիրոսյան, «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
- Սամվել Բալոյան, «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն
- Սեյրան Մինասյան, «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի գիտաարտադրական հարցերով տնօրեն
- Նիկոլայ Գրիգորյան, Արտակարգ իրավիճակների նախարարության մամլո քարտուղար
- Մ. Մկրտչյան, Սևանա լճի փրկարարական կենտրոնի հրամանատար :
- Սամվել Շահինյան, Հայաստանի սպելեոլոգիայի ֆեդերացիայի նախագահ
- Դարոն Ղափլանյան, ռեժիսոր-բեմադրիչ, Սևանա լճի բնապահպանության վերաբերյալ վավերագրական ֆիլմերի հեղինակ :
- Կարեն Բալայան, «ԱՅԱՍ» ջրային հետազոտությունների ակումբի նախագահ
- Հաբեթնակ Հակոբյան, SPFA Հայաստանյան մասնաճյուղի ղեկավար
- Սամվել Խաչատրյան, Բժշկական սարքավորումների մատակարար MEDITECH ՍՊԸ ՎՆԻ տնօրեն (O² և միջին խորության սուզումների համար նախատեսված սարքավորումներ)
- Հանդիպում ՀՀ սուզորդների հետ

Հայաստանում տարբեր կառույցների հետ բազմաթիվ հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ բավականաչափ չեն Սևանա լճի ստորջրյա ավազանի հետ ուղղակիորեն կապված տեղեկությունները: Հայաստանի մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ շահագրգռված են ձեռք բերել իրենց գիտական հետազոտությունների համար ցանկացած օգտակար տեղեկատվություն (գնևումներ, բացահայտումներ, լուսանկարներ, տեսանյութեր...):



Մեզ արդեն տրամադրվել են հարցաշարեր, որոնք պետք է լրացվեն ծրագրի գիտական գործընկերների կողմից՝ ներկայացնելով իրենց մտադրություններն ու տալով ճշգրիտ պարզաբանումներ :

Գիտահետազոտական կառույցները և այլ գործընկերները կարող են տրամադրել հետևյալ միջոցները.

- ստորջրյա ուսումնասիրության համար նախատեսված նավ (8 մարդ, որից 3-ը նավի անձնակազմ)
- զոդիակ (փչովի նավ)
- փոխադրամիջոցներ
- կացարաններ՝ տեղակայված Սևանա լճի երեք բևեռներում :

Ճանապարհային և ջրային փոխադրամիջոցները տրամադրվում են առանց վառելիքի : Հարկ է նախատեսել այդ սարքավորումների կիրառման համար անհրաժեշտ բյուջե :

Ծրագրի գործընկեր «ԱՅԱՍ» ջրային հետազոտությունների ակումբը՝ Կարեն Բալայանի գլխավորությամբ, ինչպես նաև Սևանա լճի փրկարարական կենտրոնը կտրամադրեն 3 կամ 4 սուզանավ : Հարկ է նշել, որ Հայաստանում ներկայումս կա մոտավորապես տասը գործող սուզանավ :

SPFA կազմակերպության (հիմնադրված 1901 թվականի օրենքի համաձայն) Հայաստանյան մասնաճյուղը նույնպես իր աջակցությունը կցուցաբերի ծրագրին՝ իր ֆրանսախոս ակումբի օգնությամբ ապահովելով անհրաժեշտ թարգմանությունները (ֆրանսերեն ↔ հայերեն):

Ծրագրի իրականացման թույլտվության հարցն ամբողջությամբ լուծված է այն պայմանով, որ այդ ստորջրյա հետազոտությունները իրականացվեն ՀՀ գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքների շրջանակներում : Տեղական իշխանությունները պետք է լինեն տեղեկացված՝ առանց հաշվի առնելու այն փաստը, որ Սևանա լճի փրկարարական կենտրոնի կողմից տրամադրվելու է անձնակազմ՝ առաքելության անդամներին ուղեկցելու նպատակով :

Ինչ վերաբերում է հետազոտությունների համար նախատեսված սարքավորումների մաքսագերծմանը, հնարավոր է աջակցություն ստանալ համապատասխան նախարարությունների կողմից՝ հաշվի առնելով բոլոր գործընկերների հետաքրքրությունը ծրագրի նակատմամբ : Այնուամենայնիվ, ժամանակի առումով պետք է շտապել, քանի որ մաքսային հարկերից ազատման համար անհրաժեշտ է դիմել բավականին շուտ (սարքավորումները ստանալուց առնվազն 3 շաբաթ առաջ) :

Ելնելով սեղմ ժամկետներից (առաջին ուսումնասիրությունները պետք է սկսվեն հունիս ամսվա կեսին) և ծրագրի ֆինանսավորման հետ կապված խնդիրներից՝ դժվար կլինի Հայաստան ներմուծել և, հատկապես, հայթայթել սարքավորումների ամբողջական ցանկը : Որոշ սարքավորումներ կլինեն անձնական և ժամանակավորապես կթողնվեն Հայաստանում, սակայն ոչ որպես նվիրատվություն որևէ կազմակերպության :



Ինչ վերաբերում է ծրագրի հրապարակմանը, ՀՀ Սփյուռքի նախարարությունը, ինչպես նաև Արտակարգ իրավիճակների և Բնապահպանության նախարարությունները, կարող են մեզ աջակցել, սկսելու այդ փուլը, մինչև տեղական շուկայում գովազդային արտադրանքի համար ֆինանսավորում ստանալը :

Բեմադրիչ Դարոն Ղափլանյանը, որը 70-80-ական թվականներին Սևանա լճի վերաբերյալ մի շարք վավերագրական ֆիլմեր է նկարահանել, որոնցից մեկը ստորջրյա, մեզ մասնագիտորեն լուսաբանման հնարավորություն կտա :

Ինչ վերաբերում է հովանավորներ գտնելուն ինչպես Հայաստանում, այնպես էլ Ֆրանսիայում, արդյունքները դեռևս չեն գոհացնում՝ չնայած այն որոշակի հետաքրքրությանը, որ առաջացնում է ծրագիրը : Մինչդեռ կարող ենք վստահ լինել, որ մեր նախապատրաստական առաքելության արդյունքների հրապարակումը կնպաստի գտնել նոր հովանավորներ, որն էլ որոշիչ դեր կունենա տարվելիք աշխատանքների համար :

Մեր հիմնական մտահոգությունն է գտնել 50 կիլոգրամանոց փոքր օդամղիչ, որը նախատեսված է լցնելու սուզման բալոնները երկրաբանական կամ էկոհիդրոլոգիական պեղումների գոտիների մոտակայքում :

Երկրորդ խնդիրն է համագործակցության եզրեր գտնել «Արմավիա» ավիաընկերության հետ՝ սարքավորումների տրանսպորտային ծախսերը, ինչպես նաև Հայաստան եկող ֆրանսիացի (առնվազն 2) սուզորդների անձնական սարքավորումների հավելյալ տուրքերը կրճատելու համար :

Տեխնիկական մասով, MEDITECH ընկերությունը մեզ կմատակարարի Թթվածնով՝ միջին խորության սուզումները ապահովելու համար : Այս ընկերությունը արդեն մեզ տրամադրել է մի շարք սարքավորումներ (ադապտոր, փոխարկիչ ...)

Ընդհանուր հաշվով, գործողությունների նախագիծը հետևյալն է.

Կմշակվի 2010-2013թթ եռամյա, գիտական գլոբալ ծրագիր, որպեսզի տարբեր գիտահետազոտական ինստիտուտներ կարողանան գիտական ծրագրերի շրջանակներում ֆինանսավորման հայտեր ներկայացնել ֆրանսիական, եվրոպական կառույցներին, Յունեսկոյին, ՄԱԿ-ին ...

Մինչ ֆինանսավորում գտնելը, որոշ ուսումնասիրություններ կիրականացվեն մասնավոր ֆինանսավորմամբ (հովանավորություն, աջակցություն ֆրանսիական կամ հայկական հասարակական կառույցների կողմից), որպեսզի իրականացվեն ստորջրյա առաջին հետազոտությունները, որոնք նախատեսված են սկսել 2010 թվականի հունիս ամսվա երկրորդ կեսին :

Ինչ վերաբերում է ստորջրյա սուզումները Հայաստանում որպես սպորտաձև զարգացնելու հեռանկարներին, ըստ տեղում ձեռք բերված տվյալների, այսօր դեռևս հնարավոր չէ խոսել իրականացման պայմանների առկայության մասին :

Հիրավի, սուզորդների վերապատրաստման, միջազգային չափանիշներին համապատասխան անհրաժեշտ սարքավորումների, գործող կանոնակարգի, փրկարարական միջամտության չափանիշների և պայմանների առումով կարող ենք նշել, որ այսօր այս բնագավառում պաշտոնապես ոչինչ չի նախաձեռնվում :



Հայաստանում կատարվելիք հետագա առաքելությունների ընթացքում, խորացված աշխատանքներ կտարվեն տարածքը ուսումնասիրելու և այդ փուլը ժամանակին ավարտին հասցնելու համար :

Այժմ կազմվում է հաշվետվություն, որը ներառում է մանրամասներ գիտահետազոտական ինստիտուտներին հուզող խնդիրների և սույն թվականի հունիս ամսվա երկրորդ կեսին իրականացվելիք ծրագրի առաջին առաքելության վերաբերյալ :



**ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՋՐՅԱ ԱՎԱԶԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆՔԱԶՈՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ԱՄՓՈՓՈՒՄ
12 հունիսի – 2 հուլիսի, 2010թ.**

2010 թվականի հունիսի 12-ից հուլիսի 2-ը իրականացվեց Սևանա լճի ստորջրյա ավազանի գիտահետազոտական առաքելություն: Ֆրանս-հայկական այս առաքելությունը ղեկավարում էին Ստորգետնյա հետազոտությունների և սուզումների կենտրոնի նախագահ Կլոդ Թուլուսյանը (նախաձեռնության հեղինակ) և նրա օգնական Ստեֆան Կոչայանը: Ծրագրին աջակցում էին նաև «ԱՅԱՍ» ջրային հետազոտությունների ակումբի նախագահ Կարեն Բալայանը և ակումբի սուզորդների կազմը:

Առաքելության համար նախատեսված ֆինանսավորման բացակայության պատճառով յուրաքանչյուր գործընկեր ծրագրին մասնակցեց իր իսկ միջոցներով և ինքը հոգաց իր ընթացիկ ծախսերը:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը իր խորհուրդներով ակտիվորեն սատարեց առաքելությանը՝ հանդիսանալով բարոյական երաշխիք և ցուցաբերելով արդյունավետ աջակցություն տեղանքում:

Հայաստանում սուզորդների թիվը մեծ չէ, մեկ տասնյակից ոչ ավել: Սևանա լճի ստորջրյա ավազանի վերաբերյալ տեղեկատվության սակավությունը բացատրվում է նրանով, որ սուզումներով քիչ են զբաղվում, բացի դրանից, դյուրին չէ հայթայթել սուզման համար համապատասխան սարքավորումներ: Ուստի, հաշվի առնելով, որ լիճը մեծ նշանակություն ունի երկրի համար, մեր ծրագրի սկզբունքներն էին լճի ստորջրյա լուսանկարների ու տեսագրությունների ձեռքբերումն ու հատակի ուղղակի ուսումնասիրությունները:

Ծրագրի առաջնային նպատակն էր նպաստել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հետազոտական կենտրոններին, ինչպես նաև Սևանա լճին առնչվող հարցերի շուրջ աշխատող պետական մարմիններին հետազոտելու լճի հատակը: Իրականացված նախապատրաստական առաքելությունը թույլ տվեց ձեռք բերել ծրագրի գործընկերներ, կազմվեց գիտական հանձնաժողով, որը բաղկացած էր հետևյալ անձանցից.

- Բարդուխ Գաբրիելյան, Հիդրոլոգիայի և Իխտիոլոգիայի ինստիտուտի տնօրեն,
- Արկադի Կարախանյան, Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն,
- Արմեն Սաղաթելյան, Էկոլոգիական և նոստրաբիոլոգիայի ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն,
- Սեյրան Մինասյան, ՀՀ բնապահպանության նախարարությանը կից «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» (Հայէկոմոնիտորինգ) ՊՈԱԿ-ի փոխտնօրեն,



- Մ. Գնդոյան, ՀՀ բնապահպանության նախարարությանը կից «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն :

Հունիսի 19-ին ՀՀ Գիտությունների ակադեմիայի շենքում տեղի ունեցած ընդհանուր ժողովի ժամանակ դոկտոր Արկադի Կարախանյանը հանդես եկավ, 2010թ ամռանը ստորջրյա հետազոտությունները Սևանա լճի կենտրոնական մասում իրականացնելու առաջարկությամբ, ինչը ընդունվեց բոլորի կողմից :

Սուզումներն իրականացվեցին հունիսի 22-ից մինչև 30-ը, 7 սուզորդների մասնակցությամբ, որոնցից երկուսը ֆրանսիացիներ էին : Ինչպես նաև, ներկա էին Երկրաբանական գիտությունների իստիտուտից երկու երկրաբաններ՝ Արա Ավագյանը և Պետրոս Թոզալաքյանը : Առաքելության ողջ ընթացքում ուսումնասիրություններն անց էին կացվում փոքրիկ փչովի մոտորանավակի օգնությամբ, որը մեզ տրամադրվել էր «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» (Հայէկոմոնիտորինգ) ՊՈԱԿ-ի կողմից :

Առաքելությունն ուներ մի շարք դրական կողմեր:

- Առաջին անգամ Հայաստանում մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ միավորվեցին՝ Սևանա լճի ստորջրյա ավազանում ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով :

- Կրկին առաջին անգամ այդքան մեծ թվով հայ սուզորդներ միավորվեցին մի ընդհանուր ծրագրի շուրջ :

- Ջրի որակի և ստրատեգիական կարևորությունն ունեցող այդ քաղցրահամ ջրի ավազանի էկոլոգիական հավասարակշռության հետազոտությունների վերաբերյալ առաջացավ նոր հետաքրքրություն :

Սուզորդների խումբը 9 օրվա ընթացքում իրականացրեց 90 սուզում : Լճի տարբեր խորություններից և տարբեր վայրերից ձեռք բերվեցին ջրային, նստվածքային (ավազ, տիղմ), բուսական (ստորջրյա բույսեր), կենդանական նմուշներ (խեցգետիններ և այլ ջրային մանր կենդանիներ), ընդերքից բխող գազեր, հնագիտական և հնէաբանական նյութեր : Ձեռքբերված նմուշները, ինչպես նաև Ստեֆան Կոջայանի կողմից արված բազմաթիվ լուսանկարներ և տեսանյութեր հանձնվեցին գիտնականներին : Բերդկունք գյուղի մոտ սուզորդները իրականացրին խեցգետինների հաշվարկ որոշակի միավոր տարածքի համար : Այս ամենը հնարավոր եղավ շնորհիվ «Հայէկոմոնիտորինգի» և Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կողմից տրամադրված սարքավորումների :

Մեծ և Փոքր Սևանները կապող նեղուցում իրականացվեցին ըստ խորության ջրային հոսանքների չափումներ, որը հաստատեց հակադիր ուղղությունների գոյությունը : Իրականացվեցին մի քանի պրոֆիլներ հատակի ռելիեֆի մանրամասները ճշգրտելու համար, ինչպես նաև ստորջրյա հովիտների (մասնավորապես Նորատուսի ծովածոցում) և ենթադրվող հրաբուխի շուրջ (Նորատուսի հրվանդանից հարավ արևելք) :



Ճշգրտվեցին հնէաբանական հնարավոր գոտիներ: Մեկ հնագիտական առարկա (խեցեղեն) հայտնաբերվեց Արտանիշի ծոցում, ուր կշարունակվեն հետազոտությունները:

Բոլոր նմուշներն ու նյութերը ուսումնասիրվում են գիտահետազոտական տարբեր կառույցների կողմից, և մինչև 2010 թվականի օգոստոս ամսվա վերջը կառույցներից յուրաքանչյուրը կներկայացնի համապատասխան գիտական զեկույց:

Սուզումների այս առաքելությունը թույլ տվեց բացահայտել հայ սուզորդների որակավորման մակարդակը: Առաքելության շնորհիվ հնարավոր կլինի նաև զարգացնել այս գործունեությունը Հայաստանում որպես սպորտաձև: Դա նախատեսված էր ընդհանուր ծրագրով և համաձայնեցվել էր ՀՀ սպորտի նախարարությանը կից Ջրային սպորտաձևերի ֆեդերացիայի հետ:

Ստորջրյա հետազոտությունները լայնորեն լուսաբանվել են հայկական գլխավոր հեռուստաալիքներով և մամուլում, որտեղ օգտագործվել են Ստեֆան Կոջայանի կողմից արված լուսանկարներն ու տեսանյութերը:

Ծրագրի նպատակն է նաև համապատասխան հաղորդումների և ծանուցումների միջոցով ընդլայնել Սևանա լճի վերաբերյալ տեղի բնակչության տեղեկացվածությունը՝ դրանով իսկ կանխարգելելով խորտակումների վնասը և բնակչությանը իրազեկելով լճի էկոհամակարգի անկայունության մասին:

Հուլիսի 1-ին ՀՀ Գիտությունների ակադեմիայի շենքում տեղի ունեցած փակման ժողովի ժամանակ գիտական հանձնաժողովը իր մեծ գոհունակությունն արտահայտեց ձեռք բերված արդյունքների վերաբերյալ և հանդես եկավ ծրագրի հետագա զարգացման մեծ շահագրգռվածությամբ: Դոկտոր Արկադի Կարախանյանի կողմից առաջարկություն արվեց ստեղծել ծրագրի վերաբերյալ համացանցային կայք, ինչը միաձայն ընդունվեց առաքելության բոլոր գործընկերների կողմից:



Մանրամասն հաշվետվություն

Փուլ 1 : 2010թ-ի մայիսի 1-ից հունիսի 12-ը կատարվեց սարքավորումների հավաքագրումն ու դրանց փորձարկումը :

Կլոդ Թուլուսյանը կազմեց անհրաժեշտ սարքավորումների ցուցակը և նշեց դրանց տեղափոխման եղանակները : Դրանց մի մասը ուղարկվեցին ինքնաթիռային բեռնափոխադրման միջոցով, մնացած մասն իրենց հետ բերեցին Կլոդ Թուլուսյանն ու Ստեֆան Կոչայանը իրենց իսկ սեփական միջոցներով :

Փուլ 2 : 2010թ-ի հունիսի 19-ից 19-ը իրականացվեցին տեղանքի պատրաստման աշխատանքներ Հայաստանում :

2010թ-ի հունիսի 14-ին Կլոդ Թուլուսյանը ժամանեց Հայաստան նախատեսվող արշավի վերաբերյալ հարցազրույցներ կատարելու համար : Կարևորագույն խնդիրը ինքնաթիռով ուղարկված սարքավորումների դուրս բերումն ու ձևակերպումն էր Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան գիտական բաժնում : Բացի այդ, մի շարք հարցազրույցներ և հանդիպումներ տեղի ունեցան արշավի մասնակիցների և սուզորդների հետ : Սա նաև հարմար առիթ էր աշխատել Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտնականների հետ և սահմանել արշավի հետագա ընթացքի մանրամասները :

Այս փուլը եզրափակվեց Երկրաբանական գիտությունների ինստիտուտում հունիսի 19-ին տեղի ունեցած ընդհանուր ժողովով, որին մասնակից էին Հայաստանում եղակի այս իրադարձությամբ հետաքրքրված բազմաթիվ հայ լրագրողներ :

Ծրագիր

Փուլ 3 : հունիսի 20-ից 30-ը իրականացվեցին լճի հետազոտական աշխատանքները :

Արշավը պետք է սկսվեր կիրակի օրը՝ հունիսի 20-ին : Սարքավորումները Երևանից տեղափոխվեցին Մոխանի բազա, որը գտնվում է Բերդկունքի և Հայրեվանքի միջև, Երևանի պոլիտեխնիկական համալսարանի տարածքում, Սևանա լճի արևելյան ափին :

Առաջին խնդիրը, որ առաջացավ կախված էր Lada Niva մակնիշի մեքենայի հետ, որը պիտի տրամադրեր մեր ընկերներից մեկը : Տեխնիկական որոշակի խնդիրների պատճառով ստիպված եղանք մաս մաս տեղափոխվել Սևան, կիրակի առավոտյան Կլոդ Թուլուսյանն ու Մամիկոն Հակոբյանը, երկրորդ անգամ՝ Ստեֆան Կոչայանը :

Երկրորդ խնդիրը առաջացավ, երբ Կլոդ Թուլուսյանը հանդիպեց Սևան ազգային պարկի տնօրենին և պարզեց, որ վերջինս տեղյակ չէ արշավի մասին և պահանջում է համապատասխան թույլտվություն Բնապահպանության նախարարության կողմից :

Հաջորդ առավոտյան, Ստեֆան Կոչայանը, որն այդ ժամանակ դեռ Երևանում էր, դիմում ներկայացրեց Բնապահպանության նախարարությանը՝ թույլտվություն



ստանալու համար : Գործընթացը պիտի տևեր մի քանի օր : Իսկ լրատվամիջոցները արդեն հայտարարել էին գիտարշավի մեկնարկման օրը՝ հունիսի 21-ը : Բարեբախտաբար, Իխտիոլոգիայի ինստիտուտի միջնորդության շնորհիվ հնարավոր եղավ ստանալ Բնապահպանության նախարարության թույլտվությունը :

Երկուշաբթի երեկոյան արդեն մասնակիցների կազմն ու սարքավորումները պատրաստ էին : Եվ հունիսի 22-ի վաղ առավոտյան, Բնապահպանության նախարարության նշած ժամին աշխատանքները սկսվեցին :

Կացության պայմաններ

Մոխանի բացօթյա տարածքում երկու տնակ էր հատկացված գիտարշավի մասնակիցներին՝ ապահովված էլեկտրական հոսանքով, սակայն սանիտարական նվազագույն պայմաններով՝ առանց լոգանքի հնարավորության : Մնունդը նախատեսվում էր յուրաքանչյուր անձի համար բավականին համեստ չափաբաժնով :

Արտանիշում 2 սենյականոց մի տնակ էր հատկացված Սևան ազգային պարկի կողմից, ուր սանիտարական պայմանները չէին տարբերվում նախորդ կացարանից : Ինչ վերաբերում է սննդին, Երկրաբանական գիտությունների ակադեմիայի վարորդը՝ Ստեփանը, հանձն էր առել խմբին կերակրելու խնդիրը :

Ֆրանսիացիները, Սևանա լճում անցկացրած ողջ ընթացքում հյուրընկալվել էին Վահե Մելքոնյանի ընտանիքում, Սևան քաղաքում : Իհարկե, հարմարավետությունը շատ տարբեր էր տնակների համեմատությամբ, սակայն այստեղ ևս առկա էր ջրի խնդիրը : Գոյություն ուներ ջրամատակարարման որոշակի ժամային ռեժիմ, իսկ այդ ժամերին նրանք տնից բացակա էինք լինում :

Հարկ է նշել, որ Սևան ազգային պարկը սուզորդների խմբին տրամադրել էր 100 լիտր վառելիք՝ տեղում օգտագործվող փոխադրամիջոցների համար :

Մասնակիցների կազմը

Խմբի կազմում էին 2 ֆրանսիացի և 5 հայ սուզորդներ, որոնցից 4-ը ԱՅԱՍ ջրային հետազոտությունների ակումբի անդամներ էին, 1 արհեստավարժ սուզորդ, որը նաև Արտակարգ իրավիճակների նախարարությանը կից Սևանի փրկարարական կենտրոնի կամավորներից էր : Գիտարշավի որջ ընթացում սուզորդների կողքին ներկա էին Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտնականները, ՀայԷկոՄոնիտորինգի և Սևան ազգային պարկի անդամները, որոնք նաև ներկայացնում են Իխտիոլոգիայի ինստիտուտը (ներքոհիշյալ՝ մասնակիցների ցուցակը) :

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի գիտությունների ակադեմիային կից Երկրաբանական գիտությունների ինստիտուտ, տնօրեն Արկադի Կարախանյան



- Հայաստանի գիտությունների ակադեմիային կից Հիդրոէկոլոգիայի և իխտիոլոգիայի ինստիտուտ, տնօրեն Բարդուխ Գաբրիելյան
- ԱՅԱՍ ջրային հետազոտությունների ակումբ, նախագահ Կարեն Բալայան: Ակումբը հայտնի է Հայաստանում և Եվրոպայում հայկական մեծ առաջատանավի կառուցմամբ, որն անցել է հետևյալ ծովային ուղին՝ Վրաստան, Ֆրանսիա, Անգլիա, Բալտիկ ծով, Ռուսաստան, Վրաստան
- Սամվել Շահինյան, Սպելեոլոգիայի հայկական ֆեդերացիայի նախագահ
- Արտակ Սարգսյան, Սևան ազգային պարկի պաշտոնյա
- ՍՀՄԿ – Մարսելի Ստորջրյա հետազոտությունների և սուզումների կենտրոն
- ԱՀՀԿ – Մարսելի Անդրծովյա հնագիտական հետազոտությունների կենտրոն

3-րդ փուլն ավարտվեց հունիսի 30-ին, ժամը 13 :00

Գիտնականների մեկնելուց հետո գիտարշավին մասնակցած սուզորդները ամփոփեցին և վերլուծեցին սուզումների իրենց տեխնիկական և քննարկեցին այս բնագավառի հեռանկարները՝ իրենց փորձը նորացնելու կամ այս գործունեությունը ժամանցային սպորտաձևի վերածելու հնարավորությունը :

Ստորջրյա հետազոտությունների և սուզումների կենտրոնն իր անփոփոխ դիրքորոշումն ունի այդ հարցի շուրջ: Այն է՝ Սպորտի նախարարության հետ համաձայնության գալ այս սպորտաձևը զարգացնելու հարցում, կազմել ամբողջական փաթեթ՝ սահմանելով կիրառման պայմանները նման վտանգավոր սպորտաձևի, որը պահանջում է անվտանգություն՝ տեխնիկական (ջրասուզումների սարքավորումներ և օդամատակարարում), ջրասուզման հմտությունների առումով (անվտանգության կանոններ), վերապատրաստումների և, վերջապես, բուժօգնության առումով, պատահարի դեպքում :

Փուլ 4. հուլիսի 1-2-ը տրամադրվեցին քննարկումներին ու վերլուծություններին, Հայաստանում

Հունիսի 30-ին, ժամը 19 :00-ին տեղի ունեցավ ժողով գիտնականների հետ, որի ընթացքում քննարկվեց տեղում իրականացված գիտարշավը և փոխանակվեցին տպավորություններ ձեռք բերված նմուշների նախնական ուսումնասիրությունների շուրջ : Հնչեցին դրական կարծիքներ և միաձայն ընդունվեց գիտարշավը շարունակելու որոշումը : Որոշվեց ստեղծել ինտերնետային կայք և տեղադրել ձեռք բերված նմուշների մանրամասն հաշվետվություն՝ ներկայացնելով առաջին խորը ուսումնասիրությունների նախնական արդյունքները :

Հաջորդ երկու օրերը տրամադրվեցին լրատվամիջոցներին՝ գիտարշավի առաջին արդյունքները հաղորդելու նպատակով :



Հայկական լրատվամիջոցներ

Գիտարշավի որջ ընթացքում մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչներ այցելեցին՝ տեղում ռեպորտաժներ և հարցազրույցներ վարելու համար :

Լրատվամիջոցների շրջանակը շատ լայն էր՝ հեռուստատեսություն, մամուլ, ռադիո և համացանաց : Նրանց տրամադրվել էին լուսանկարներ և տեսանյութեր, որոնք տարածվել էին հեռուստատեսային հաղորդումների միջոցով :

Գիտարշավի լուսաբանումը շատ կարևոր դեր ունեցավ, քանի որ հանրությունը ավելի զգայուն է Սևանա լճի բնապահպանական խնդիրների և էկոլոգիայի նկատմամբ :

Ժամանակի մնացած մասը տրամադրվեց սարքավորումների պահեստավորմանը հաջորդ գիտարշավի ժամանակ օգտագործելու համար : Անհրաժեշտ էր նաև համապատասխան լուծումներ գտնել, դրանց հետ վարադարձի համար՝ հաշվի առնելով այն փաստը, որ ֆրանսիացի մասնակիցները հետ վերադառնալիս ունեին 50 կգ բեռի իրավունք, յուրաքանչյուրը :



Բուն սուզումներն իրականացվեցին հունիսի 22-ից 30-ը 7 սուզորդների, որոնցից երկուսը ֆրանսիացի էին, ինչպես նաև Երկրաբանական գիտությունների ինստիտուտից Արայիկ Ավագյանի և Պետրոս Թոզալաբյանի մասնակցությամբ



Գիտարշավի ողջ ընթացքում ուսումնասիրություններն անց էին կացվում փոքրիկ փչովի մոտորանավակի օգնությամբ, որը մեզ տրամադրվել էր «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից :



Ձեռք բերվեցին ջրային և նստավծքային նմուշներ, իրականացվեցին ջերմաստիճանային չափումներ : Բերդկունք գյուղի մոտ սուզորդները կատարեցին նաև խեցգետինների հաշվարկ որոշակի միավոր տարածքի համար:



Մակերևութից կատարված հետազոտությունների արդյունքում չհաջողվեց գտնել լճի ընդերքի ենթադրվող հրաբուխը, բայց գիտնականների խումբը ճշգրտորեն դիրքորոշեց մոտ 35մ խորության վրա տեղակայված հնագիտական կիրճը, որտեղ և հետագայում հնարավոր է իրականացվեն հնագիտական ուսումնասիրություններ:



Հատկանշական է, որ հետազոտությունների ընթացքում բացահայտվեցին երկու շատ կարևոր ջրային հոսանքներ Մեծ և Փոքր Սևանները կապող նեղուցում: Ձեռք բերվեցին համապատասխան ջրային նմուշներ, տեսագրություններ, կատարվեցին ջերմաստիճանային չափումներ:



Հայտնաբերվեցին բազմաթիվ հնէաբանական գոտիներ, ինչպես նաև երկու հնագիտական վայր, որոնցից մեկը հետազոտությունների վերջում:



Սուզումների գիտարշավը լայնորեն լուսաբանվել է հայկական գլխավոր հեռուստատեսության կողմից, որոնք օգտագործել են Ստեֆան Կոչայանի կողմից կատարված տեսանյութերը :



*

*

*

Կլոդ Թուլունջյանը հայ լավագույն սուզորդներից մեկի՝ Վահե Մելքոնյանի հետ (սեպտեմբեր 2009)



Կլոդ Թուլունջյանը ԱՅԱՍ ակումբի նախագահ Կարեն Բալայանի (աջ մասում) և Մամիկոն Հակոբյանի հետ (սեպտեմբեր 2009)



ՆԱԽՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ԾԱԽՍԵՐ	ՄՈՒՏՔԵՐ
Տեղափոխություններ և տրասնպորտ 4340€ -դեպի Հայաստան հետադարձ թռիչք: 2 սուզորդ x650€=1300€ -Վարձակալություն 1 ավտոմեքենա 35€/օր x 20 օր =900€ -Վառելիք: 2 ավտոմեքենա 16€/օր (200կմ/օր) x 20օր= 640€ -Տրանսպորտ: 150կգ սարքավորումներ x10€/կգ=1500€	Սուզորդների մասնակցություն 1940€
Գազ և փչման ծախսեր 150€ 10մ խորանարդ օր/օր x 1€/մ ³ 15 օրվա համար=150€	
